# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ – ԲԵՄԱԿԱՆՔ

* Շբ. 1 Օգոստ.— Ցիշատակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ: Ժամարարն էր Պոլսէն հիւրաբար Ս. Աթոռ դարձող Արժ. Տ. Բարթող Քհն. Երքանեան:

— Այլակերպութեան մեծահանդէս նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արք.: Ապա կատարուեցաւ Տեառնեղբօր գահակալութեան տարեդարձի աւանդական հանդիսութիւն:

— Իրիկնադէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեսցէ»ի եւ Հսկման կարգեր: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս:

* Կիր. 2 Օգոստ.— ՎԱՐԴԱՎԱՌ (Տօն Այլակերպութեան Տեառն): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան: Արարողութիւնները ձայնասփռուեցան խորանային ատրիկայանէն:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»ին նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպս. Պօղարեան:

* Բշ. 3 Օգոստ.— Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ազատ Արդ. Պալիօզեան: Ապա, Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբրիկեանի նախագահութեամբ կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ, յետոյ գաւիթը՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Բ. Պատրիարք Հօր շիրմին մօտ եւ ամենէն ետք, թափօրական գնացքով, Զամ-Թաղի պուրակ-գերեզմանատան մէջ:

— Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ, յետ ժամերգութեան, կարդացուեցաւ Ս. Եղիշէ Վարդապետի Այլակերպութեան ճառը:

* Ուր. 7 Օգոստ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Շբ. 8 Օգոստ.— Ս. Թադէոսի առաքելոյն մերոյ եւ Սանդխտոյ կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նարեկ Արդ. Մարգարեան:

* Շբ. 15 Օգոստ.— Ս. Որդւոց եւ Թոռանց Ս. Գրիգոր Լուսաւորչին: Այսօր սկսան Վերափոխման ամէնօրեայ հանդիսաւոր Ս. Պատարագները՝ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նարեկ Արդ. Մարգարեան:

* Կիր. 16 Օգոստ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Արդ. Ղարիպեան: Ս. Պատարագէն ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արք. Ասլանեանի գլխաւորութեամբ կատարուեցաւ նախ հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն՝ Պէյրութի մէջ վերջերս վախճանած Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեանի հոգւոյն հանգստեան, եւ ապա՝ «Սրբոց-Սրբոց-Օրհնէք»ի աւանդական արարողութիւնը:

* Շբ. 22 Օգոստ.— Եփեսոսի Ս. Ժողովոյն (431): Ս. Պատարագը Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց Հոգշ. Տ. Սիփան Արդ. Մխսեան:

* Կիր. 23 Օգոստ.— Բարեկենդան Ս. Աստուածածնի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

* Ուր. 28 Օգոստ.— Շողակաթի տօնի նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Շբ. 29 Օգոստ.— Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը՝ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ՝ Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց Հոգշ. Տ. Ազատ Արդ. Պալիօզեան:

— Կէսօրէ ետք ժամը 3.30ին, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժերով մեկնեցաւ Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Վերափոխման մեծահանդէս նախատօնակը, նախագահութեամբ Նորին Ամենապատուութեան:

— Գիշերուան կիսին, նոյն Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեսցէ»ի եւ Հսկման կարգերը: Հանդիսապետն էր Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբրիկեան:

* Կիր. 30 Օգոստ.— ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ: Առաւօտեան ժամը 8ին, Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանիի ձորը, ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Գերշ. Հանդիսապետ Սրբազանը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Ս. Կուսի գերեզմանին վրայ, քարոզեց՝ «Աստուածածին անհարթանացեալ, յերկրէ երկինք հարս ընծայեալ» բնաբանով եւ Ս. Պատարագէն ետք նախագահեց «Անդաստան»ին:

* Բշ. 31 Օգոստ.— Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան: Ապա, Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբրիկեանի նախագահութեամբ, կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ, յետոյ գաւիթը՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Բ. Պատրիարք Հօր շիրմին մօտ եւ ամենէն ետք, թափօրական գնացքով, Զամ-Թաղի պուրակ-գերեզմանատան մէջ:

* Շբ. 5 Սեպտ.— Է. օր Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանի ձախակողմը գտնուող Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նարեկ Արդ. Մարգարեան:

* Կիր. 6 Սեպտ.— Ը. օր Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Արդ. Ղարիպեան:

* Բշ. 7 Սեպտ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեան:

* Գշ. 8 Սեպտ.— Ս. Յովակիմայ եւ Աննայի՝ ծնողաց Ս. Աստուածածնի եւ կանանցն Խղարներից: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Ըստ սովորութեան պատարագեց Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սիփան Արդ. Մխսեան: Երթ ու դարձի թափօրները գլխաւորեց եւ արարողութեանց նախագահեց ժամօրհնող Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր:

* Շբ. 12 Սեպտ.— Ս. Թովմայի, Յակոբայ եւ Դիմաւոսի առաքելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ազատ Արդ. Պալիօզեան:

* Կիր. 13 Սեպտ.— Գիւտ Գօտւոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սիփան Արդ. Մխսեան: Երթ ու դարձի թափօրներուն նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս:

* Ուր. 18 Սեպտ.— Երեկոյեան ժամերգութեան աւարտին, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը կիրակա-

կուսակրօնութեան աստիճան ձեռնհեց Ուրարակիր Տրդ. Գաբրիէլ Թաշճեանի:

* Եր. 19 Սեպտ.— Նիկիոյ Ս. Ժողովականին: Ս. Գլխադրի մատրան մէջ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը կատարեց սարկաւագական ձեռնադրութիւնը Տրդ. Գաբրիէլ Թաշճեանի: Օրուան պատարագիչն էր Հոգշ. Տ. Նարեկ Աբղ. Մարգարեան:

* Կիր. 20 Սեպտ.— Բարեկենդան Ս. Խաչի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Աբղ. Ղարիպեան:

— Ս. Կայսր Մեծին հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Հանդիսապետն էր Ռումանիոյ եւ Պուլկարիոյ Առաջնորդ Գերշ. Տ. Տիրայր Եպս. Մարտիկեան.

* Բշ. 21 Սեպտ.— Տօնունդ Ս. Աստուածածնի: Առաւօտեան ժամը 8ին, Գերշ. Տ. Տիրայր Եպս.ի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը:

* Եր. 26 Սեպտ.— Տօն եկեղեցւոյ ի նաւակատիս Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Պալըգճեան:

— Ամեն. Պատրիարք Ս. Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Խաչվերացի մեծահանդէս նախատօնակին, որմէ ետք Ս. Խաչափայտի մասունքը թափօրով փոխադրեց Աւագ Սեղան:

— Կիրակամտիքին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Հիմնացէ»ի եւ Հսկման կարգեր: Հանդիսապետն էր Պէյրութէն հիւրաբար Ս. Աթոռ ժամանած Գերշ. Տ. Գնէլ Եպս. Ճէրէճեան:

* Կիր. 27 Սեպտ.— ՏՕՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Երուսաղէմի Կաթողիկոսական Պատուիրակ եւ Փարիզի Առաջնորդ Գերշ. Տ. Սերովբէ Արքեպս. Մանուկեան, խօսելով մարդկութեան փրկարար Խաչին խորհուրդին շուրջ: Ետ քարոզի, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի նախագահութեամբ, տեղի ունեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռոյս եւ ազգիս բարերար Մելգոնեան եղբարց հոգիներուն համար: Սուրբ Պատարագը եւ քարոզը ձայնասփռուեցան իսրայէլեան ռատիոկայանէն:

— Կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արք. նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած Խաչվերացի մեծահանդէս «Անդաստան»ին:

* Բշ. 28 Սեպտ.— Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սիփան Աբղ. Մխեան: Ապա, Ամերիկահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի գլխաւորութեամբ, կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ՝ Մայր Տաճարին մէջ, ապա գաւիթը՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Բ. Պատրիարք Հօր շիրիմին վրայ, եւ անկէ ետք, թափօրական ընթացքով, Ջամ-Թաղի հայոց գերեզմանատան մէջ:

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

* Եշ. 17 Սեպտ.— Ամերիկեան Նոր Ընդհ. Հիւպատոսը իր առաջին այցելութիւնը տուաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Բշ. 21 Սեպտ.— Բրիտանական Ընդհ. Հիւպատոսը քաղաքէն իր մեկնումին առթիւ հրաժեշտի այցելութիւն մը տուաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Գշ. 22 Սեպտ.— Թէլ-Ավիվի Աւստրալիոյ դեսպանը այցելեց Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Եշ. 24 Սեպտ.— Ամեն. Պատրիարք Ս. Հայրը փոխադարձ այցելութիւն տուաւ Պելճիքական Ընդհ. Հիւպատոսին:

* Շբ. 26 Սեպտ.— Պապական Նուիրակ Մոնս. Փիօ Լաղի այցելեց Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ՄԸ

Երուսաղէմի Եբրայական Համալսարանի Թրումըն կեդրոնի կազմակերպութեամբ, Նոյեմբեր 1էն 7 տեղի ունեցաւ միջազգային համաժողով մը՝ *«Կրօնք, Ժողովուրդ, Ազգութիւն եւ Երկիր»* նիւթին շուրջ:

Այս համաժողովին մասնակցեցան, պատրաստուած ուսումնասիրութիւններով եւ ճառերով, միջազգային համբաւի տէր բազմաթիւ գիտնականներ եւ խորհողներ, որոնք յատկապէս Երուսաղէմ հրաւիրուած էին կազմակերպողներուն կողմէ:

Համաժողովը, որ գումարուեցաւ Գիտութիւններու Կաճառին մէջ, ի միջի այլոց ունէր հետեւեալ հարցերը իբրեւ խորհրդակցութեան նիւթ. *«Երրորդ աշխարհի մէջ երեւան եկող Կրօնքի, Ազգութեան եւ Երկրի Նոր Երեւոյթներ»*, *«Կրօնքի, Ժողովուրդի, Ազգութեան եւ Երկրի վերաբերեալ Հարցեր Ասիոյ մէջ»*, *«Երուսաղէմ եւ Սուրբ Երկիրը Քրիստոնէական աւանդութեան մէջ»* եւայլն:

Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի բարձրագոյն կարգի վեց բարեշնորհ Սարկաւագները, գլխաւորութեամբ Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեանի, ներկայ եղան Հինգշաբթի, 5 Նոյեմբերի եզրափակող նիստին:

digitised by A.R.A.R.@